



ᲕᲚᲛᲗᲚᲛᲗ

ՀԱՆՐԱՊԱՐԿԱՅ

ՔԱՆԱՔԱԿԱՆ ԱՋՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՐԱՐԱՆ, ՃԻՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՄ 21 ՅՈՒՆԻՍ

•ԲԱՂԱՔԱԿԱՆ

Օրուան քաղաքական լուրերը կա-
րևարութենէ զուրկ են ։ Առկախ մը-
նացեալ խնդրոյ լուծման մասին տա-
կաւին մեծ բան մը չկայ, եղբայրա-
կան ֆէրմանին վրայ պէտք եղած տե-
ղեկութիւնները տալինք հանդերձ
խորհրդածութեամբ, առ այժմ ուրիշ
նոր բան մը չեղաւ, և կերեւի թէ
կառավարութիւնը Բարձր Սաֆլիթ
փաշային դատարանը կ'սպասէ Հեւ-
րանական խնդրոյն վրայ բանակցող
ներ կարգելու համար ։ Խայրէտաւորն
փաշային անկումն Եւրոպայի մէջ լաւ
տպաւորութիւն չըրաւ, ինչպէս ար-
դէն զգալ տուած էինք, և մէկ եր-
կու օրէ 'ի վեր եկած հեռագիրը այս
կարծիքը հաստատեցին։ Եւրոպական
դիւանագիտութիւնը ջանացած էր
որպէս զի Խայրէտաւորն փաշան պաշ-
տոնի վրայ մնայ, սակայն այս վերջի-
նը չէր կրցած իւր ծրագիրն ամրոջ
տալէս վէհէ։ Սուլթանին ընդունել
տալ, և իւր սկզբունքներէն զիջում
ընել չուզելով, անկումն անհրաժեշտ
եղաւ ։ Օսմանեան նախարարաց պատ-
մութեան մէջ այս առաջին անգամն
էր որ ծրագիր մը կառավարկուէր
վեհապետին և անոր հեղինակը կը
հրաժարէր, վասն զի չէր կրնար իւր
կարծիքն ընդունել տալ։ Խայրէտաւորն
փաշային ծրագրին վրայ կատարեալ
և վաւերական տեղեկութիւն չու-
նիմք։ Բայց եթէ եւրոպական լրագ-
րաց հաւատ ընծայել պէտք է, նա-
խորդ Մեծ—Եպարքոսին գլխաւոր
պահանջումն է եղեր որ նախարա-
րաց խորհրդոյ մէջ միասնայն հաւա-
նութեամբ ընդունուած և Պետա-
կան խորհուրդէն հաստատուած որո-
շումներն անյապաղ Նորին կայսե-
րական վեհապառութենէն ստորա-
դրին ու գործադրին։ Այս պահան-
ջումը նոյն իսկ սահմանադրական վե-
հապետաց վայելած ղէթոյի իրաւուն-
քը բառակալ էր։ Ուստի վէհէ։ Սուլ-
թանը բնականաբար չէր կրնար ըն-
դունիլ այնպիսի ծանր առաջարկու-
թիւն մը, զոր նախորդ Մեծ—Ե-
պարքոսն անհրաժեշտ կը համարէր
բարեւը կառավարութեան համար ։
Ասկէ զատ Խայրէտաւորն փաշան քանի
մը նախարարաց և պալատականաց
գործերէ հեռացումը կը խնդրէ ե-
ղբր։ Ասոնց թիւը քառասունի կը հաս-
նէր, և վեհապետը չէր կրնար նոյն
իսկ իւր անձնական ծառայութեան
մէջ գտնուած ներքիննապետներու
պաշտօնանկութեան համար Մեծ—
Եպարքոսին միջամտութիւնն ընդու-
նիլ ։ Բայց նախորդ Մեծ—Եպարքո-
սին գլխաւոր նպատակն էր գործոց
պատասխանատուութիւնն ու տնօրի-

նութիւնը Բ. Դուռը կեդրոնացնել՝
ուրիշ աղբեցութեանց առաջնէ առ-
նելով, և ասոր համար կը պահան-
ջէր որ առանց նախարարաց զլիարջ
գիտութեան՝ բնաւ փոփոխութիւնը
չլինի։ Վեհ. Սուլթանը կընդունի
եղեր այս սկզբունքը, բայց ոչ ընդ-
հանուր կերպիւ, և իւր բարձր տը-
նօրինութեան իրաւունքը վերապա-
հել կուգէ եղեր։

Այս կէտին վրայ նախորդ Մեծ-
Եղբայրը իւր կարծեաց մէջ հաս-
տատ մնացած կերելի, ուստի Եւրո-
պական լրագրերէն տմանք կը կարծեն
թէ խայրէտաին փաշան բարենորո-
գումը բարձրէն սկսիլ ուղած է։ Այս-
տու ամենայնիւ, աւելորդ է ըսել թէ
այնպիսի երկրի մը մէջ, ուր սահ-
մանադրական դուռնիները նոր
հրատարակուած է, արմատական փո-
փոխութիւնը դժուարին են, և աս-
տիճանաբար միայն կրնան յառաջ
երթալ։ Յուսարի է որ նոր նախա-
րարութիւնը կը յաշտի վերին բա-
րենորոգումն այս կերպիւ գործադ-
րել։ Արդէն նախարարական պատաս-
խանատուութեան օրէնքը վիճաբա-
նութեան դրուած է նախարարաց
խորհրդին մէջ, ուր թերեւ ՚ի մտայ
ընդունուելով՝ կայսերական հաստու-
թիւնն ստանայ և հրատարակի։ Կըս-
ուի թէ վերջ։ Սուլթանը մեծ կարե-
ւորութիւն կուտայ այս օրէնքին, և
ամենէն աւելի կը վաւարքի որ նա-
խարարաց իրաւասութիւնն ու պա-
տասխանատուութիւնը սահմանադ-
րինն։ ուստի այս օրէնքին հեղինա-
կը Նորին վեհափառութիւնն համա-
րելու է։ «Արքայն կը թագաւորէ,
բայց չկառավարելի՝ սկզբունքորտ-
եան ին կանխահայ է Յուրքիդ մէջ,
ուր դեռ երէկ բացարձակ իշխանու-
թիւնը կը տիրէր և հասարակ ժողո-
վուրդն ամենայն ինչ վեհապետէն
կ'սպասէ։ Արդարեւ վեհապետ մը զո-
րաւոր և ազդու կամբով չատ մեծ
գործեր կրնայ տեսնել, և տարակոյս
չկայ որ վերջ։ Ապաիւլ Համիտ Բ. կայս-
րն իւր հաստատած սահմանադրու-
թիւնը գործադրելով՝ իւր Օղոտու
փառ հօրը Սուլթան Ապաիւլ-Մեհմե-
տի թափելովին առաւել կանոնաւոր
կերպիւ կը շարունակէ Քուրքիա
թէպէտ մէկ երկու տարիէ ՚ի վեր մեծ
կորուստներ ըրաւ, բայց ընդարձակ
և բերրի գաւառներ և միլիոնաւոր
աշխատասէր ժողովուրդ ունի․ բա-
ւական է որ բարենորոգմանց շնոր-
հիւ կենաց և ընչից ապահովութիւն,
պատուոյ և իրաւանց յարգ և ակ-
նածուլթիւն հաստատուին զօրաւոր
կերպիւ, տարակոյս չկայ որ վաճա-
ռականութիւնն ու երկրագործու-
թիւնը նոր թուիջ մը կառնեն․ քիչ
ժամանակի մէջ և երկրին հարստու-
թիւնը բնական ձրից շնորհիւ առաջ
կերթայ։ Պէտք է ուրեմն քաղաքա-

կան տառնապը վարատերով՝ ամեն
բանն աւելի ներքին վերակազմու-
թեան կարեւորութիւն ու նուիրոյցա-
կանութիւն տալ, որով իշխողաւ եւ
զոհ կը լինի, ե օտար միջամտութիւն
ներքէ կը դադրին :

Անդդիլոյ կառավարութիւնն՝ Հայաստանի բարենորոգմանը՝ պոլսիքն Պէրլինի դաշնադրին ՅԱրդ. յօդուածին դործադրութեանը վերաբերեալ պաշտօնական թուղթերը տակաւին չհաստատակեց. բայց Պէրլինի դաշնադրին 23րդ. յօդուածը տրամադրած լինելով որ Եւրոպական թուրքքիդ այն դաւառաց մէջ՝ որը վարչական յատուկ ձև մը չեն ստացած, Բ. Գուռը տեղական պիտոյից պահանջած բարենորոգումները գործադրէ՝ յանձնախումբեր անողանելով և Կիրխի կազմական կանոնադիրն հիմնուելով, Անդդիլոյ կառավարութիւնն այս յօդուածին դործադրութեանը վերաբերեալ թուղթերը խորհրդարանին հաղորդեն, որոց դրութեամբ մասերն արժան կը չհամարվի մեր ընթերցողաց ներկայեւ:

Մայիս 17-ին, Արևելեան Բումբ-
լի Էւրոպական յանձնախմբին Սնդ-
ղիական առաջին պատուիրակ Սըր
Հ. Տրամմենտ Ուոթֆ. Կ. Պոլսէն հետե-
ւալը կը գրէ Լորտ Սալիսպըրիի .

“ Կըլ յառաժ՝ որ կը ներէք ինձ վերստին Պէշլիւնի դաշնադրին 23 թղթով առած ին վրայ խօսիլ ։ Օրմանեան նախարարը յաճախ ըսին ինձ թէ Արեւելեան Բուժէլի կազմական կանոնադրին դործադրութիւնն Եւրոպական միւս դաւառաց վրայ ալ տարածելու միտք ունիւր ։ Բայց մինչև ցարդ ոչ այս և ոչ ալ ուրիշ դրութիւնն մը ներկայեցին տեղական յանձնախումբներուն ։ որք նոյն յոգուածին զօրութեամբ պիտի անուանէին ։ Խնդիրն ստիպողական հանգամանք մը կ'ըլլատանոյր և մօտ է այն ժամանակն, յառաժ՝ Արեւելեան Բուժէլի Եւրոպական յանձնախումբը պիտի ցրուի ։ Տէրութեանց պատուիրակներն անշուշտ քննութիւններ պիտի բնեն և արդիւնքն այս պիտի լինի թէ Պէշլիւնի դաշնադրին համմատ Եւրոպական թուրքիցի միւս դաւառաց վարչութիւնը բարեօքելու համար Օրմանեան կառավարութիւնը բնաւ ջանք բրած չէ ։ Օրմ. նախարարաց հետ ունեցած խօսակցութեանցս մէջ դործին ստիպողականութիւնը քանկոյ յիշեցուցի իրենց ։ Եւրոպական յանձնախումբին գէժ փոխդէի մէջ յուղում կեցած ժամանակ մեզ գէժ յաճախ լըւած ամբաստանութիւնն այս էր թէ Արեւելեան Բուժէլի շրջակայ դաւառաց վիճակն անտան կընկայ ։ Յայտնի է որ այս ամբաստանութիւնն աշիրաւ էր ։ Ըստ որում մեք դործին մէջ նախաձեռնութիւն չէինք կրնար

ունենալ . բայց վերջնադէս հաւանելի
ամբաստանութիւն մ'էր . և թշնամի
ձեռաց մէջ մեծ գէնը մը : Գտնի ո՞ր
այսօմ Արեւելեան Բումբէիի կողմախան
կանոնադիրը քուէարկեցաւ , կառա-
վարիչն անուանեցաւ և հաւանակա-
նութիւն կայ որ մեր գործը խաղա-
ղութեամբ վերջնայ , համազում
եմ որ Զեր վսեմութիւնն Արեւելեան
Բումբէիի շրջակայ գաւառներն իրենց
գանդատանաց մէջ շարունակելու վի-
ճակի մը մէջ չթողու հարկը պիտի ըզ-
դայ . զի այդ գաւառաց գանդատներն
համապաւեան խռովարարաց ձեռքը
գործիք եղած գանդատներէն աւել-
ի մանր են . ուստի իմէ բարեհո-
րոգմանց գործադրութիւնն ևս ա-
ռաւել յապաղի , մեծ վտանգներ կը
տեսնեմ . ապագային համար . դրամի
կամ տեղեկութեան պակասութիւնը
չկրնար այս յապաղման պատճառ լի-
նի . Դաշնադրին վաւերացումէն ի
վեր ինն ամիս անցաւ , և տակաւին
առաջին ձեռնարկ մը չեղաւ , ինչ-
դեռ . Պալլարիւս և Արեւելեան Բում-
բէիի Պէրլլին մէջ իրենց համար ո-
րոշում արածութիւնները կատա-
րեալայէս կը վստիւնի այսօմ .»

Յունիս 27ին Սըը Հէնրի Լէյարտ
Կիւսագնէն իորտ Սալիսպըրի Թէ պոս
եւթին վրայ Օսմանեան արտաքին
դործոյ նախարարին բերանացի յա-
ճախ դիտողութիւններ քրած և ար-
դիւնք մը ձեռք բերած չլինելով ,
վերջապէս նոյն օրն հետեւեալ ծա-
նուցադիրն ազգիչ հարկ համարած
էր Գարաթէտտրի փաշային :

“ Վերհ. Թադուհւոյն դեռսպանը Ն. Վերհախադուծեան կառավարութեանէն վերստին հրահանդ օտտոցաւ որպէս զի Պէրլինի դաշնադրին 23 լուղղութեամբ արամադրեալ յանձնախորմոց անուանման վրայ կարելի եղաւ ծին չափ զօրաւոր կերպով այնդէ Բ. Դրան մօտ Վերհ. Թադուհւոյն դեռսպանը միանգամայն հրահանդ ունի ստիպողաբար յիշեցնել Բ. Դրան որ եթէ այս մասին դաշնադրութեամբ յանձն առած պարտականութիւններն անյապաղ չդ ործադրէ, ապագային մէջ մեծ պատասխանատուութիւններ և ծանր վտանգներ կ'օպաւնան իրեն. Վերհ. Թադուհւոյն դեռսպանն այս յոյժ կարեւոր խնդրը քանիցս արտաքին գործոց նախարարին ու չադրութեանը ներկայելով, Ն. Վրսեմութիւնը բերանացի վստահութիւն տուած էր իրեն թէ Էւրոպական Թուրքիոյ դաւառաց վերաբերեալ նոր կանոնադրութիւնը խորհրդածութեան ներքեւ, և իւրաքանչիւր դաւառան յատուկ յանձնախորմոց արտի յանձնուին, որոց մէջ բռնիկ տարին ընդարձակապէս ներկայացեալ պիտի լինի. Բայց կը թուել թէ այս նկատմամբ տակաւին բնաւ ձեռնարկ մը չէ եղած, թէ և Պէրլին

և Էջմիածնից դուրս յօգուածները : Բայց , ի սէր Աստուծոյ , թողնենք , մեր կղերին փօքը ինչ էլ տրտնդ-ներ ապա մեր կաթնով իր տու-նը՝ իմ կարծիքով՝ իւր ձեռագիւղէ քանդում . մանաւանդ երբ դուք Սոխ կաթնով իր տու-նը իւր ար-ժանաւոր աստիճանի բարձրացնէք : Գէորգ Դը վերջը կը զըջայ և սաս-տիկ կը զըջայ . ամիսս որ իւր սխալ-ները այժմ չի հասկանում . . . :

Այժմ ձեզ մօտ հիւր պէտք է լի-նին , ինչպէս ինչ ասացին , Պ. Պ. Գէ-որգ Զմեկեանց — մեր քանքարաւոր դերասանը , որ եկել է այդ տեղից դերասաններ և դերասանուհիներ հրաւիրելու : Համաձայն այն յանձնա-ժողովի ցանկութեանը , որը ուղար-կել է Չմեկեանին , Չգիտեմ Պ. Խըմ-բաքարեան , ձեր Պոլսումը դարեւ-ջուր և արտաւայ շատ է ճարվում , թէ ոչ . անիծածը (դուք չը ներա-նաք , իսկ ինքը Չմեկեանը — այս բա-ռի քաղցր նշանակութիւնը կիմանայ , քաղցի է) շատ է սիրում այդ եր-կու բանը . վախճում եմ ձեր սըր-ճանցները իւրը դարեւջուր հատա-լցիւնի : Եւստով ճանաչեցէ՛ք , թող դայ-ուրիչ բան չի պատահի :

Դորա հետ եկել է , Տօքթօր Գիւ-ղարեան . . . տօքթօր թողեմ դու-րան , այսպէս ենք անուանում ան-պիտան մարդուն . սուտադդասէր է , մի և նոյն ժամանակ Հայերէնը բա- է իմանում որովհետեւ Ներսիսեան դըպ-րոցումն է եղել . այս օրերս Տփլիսի մեծ բազմութիւն անիծում է դու-րան , որովհետեւ մինչին (Սահակեան անունով մի վտճառակաւի) 5000 ռուբլի է տալիս տոկոսով և պայման վերցնում , որ եթէ իւր ժամանակին չը վճարէ , բաց ի այդ դուստը 15,000 ռուբլի տուգանք վճարէ : Գալիս է ժամանակը , ինքը չէ ցանկանում ատանալ , ասելով թէ իրան հարկաւոր չէ եւ . . . բայց մի քան օրից յետոյ դատ բացանում և խեղճ վա-ճառակաւից , որ 9 հօգի ընտանիք է կերակրում պահանջում 20 հազար ռուբլին ստանում է : Դա հողաբար-ձու է Ներսիսեան ուսումնարանում : Գիտաւ և ասլը չունեցող անձն է :

Նամակս ցանկանում եմ մի բա-րի լուրով վերջացնելու : Լսեցի , բայց մանրամասն տեղեկութիւնը հասա-քեզից յետոյ միւս նամակաւս կը հաղորդեմ , որ Ս. Մանուկեանց , որ Գերմանիայում մանկավարժութիւն էր ուսել Պ. Սանասարեանի հաշուով և որ տեսուչ էր Ներսիսեան դպրո-ցում ճանապարհորդութիւնէ անելու վան , Մուշ և Էջմիածն , որպէս զի տեղ որոշի իւր համար մի ուսուցչա-կան դպրոց բանալու : Իւր հետը տանելու է գիւղատնտեսութիւն գի-տեցող երիտասարդի , որը պէտք է երկրագործական դպրոցի մասին հո-ղըս տանի միւս անգամ՝

Ռոստոմբեյ

Ահաւանիկ Հայաստանի անունը Բիւրդաստանի փոխում լինելուն առ-թիւ Ազգ. Ժողովոյ յունիս 22ի նըս-տին մէջ Օտեան էֆէնտիի բաժն խօս-քերը :

Մեր երեսփոխան ընկերներէն իւրիւ-ճեան Կ. Էֆ. հարցման երկու կէտերուն համար դիտարկութիւն բրու թէ կրնան չարաթ մ'ենոն ընդունիլ իրենց պատաս-խանը . սակայն առաջին կէտին համար անմիջական պատասխան պահանջեց : Կու-ղամ ես ևս ձայնակցել : Բնական է որ երեսփոխան Էֆէնտիներն և այս երես-փոխանութեան տաճարն զօրու դրու-նուող ամեն ուղղակից յուզում լինին , տեսնելով որ իրենց ազդիւն ու երկրին ա-նունը փոխեր և զայն Բիւրդաստան ան-

ւաներ են , իրենց հարստահարաց անու-նով : Որքան բնական է այս յուզումը , նոյնքան իրաւացի է որ անմիջական պա-տասխան մը տրուի այս մասին :

Ես չեմ կարծեր որ Անդրկովկան կա-ռավարութիւնը Հայաստան անունին տեղ Գիւրդաստան բառը դրածած լինի , և ինչ տեսակ քաղաքականութեան համար պիտի ընէ : Անկարելի է ազգի կամ երկրի մ'անունը փոխել . տէրութիւն մ'որքան ալ հզօր լինի անհատի մը անուն անգամ չէ կարող փոխել : Անդրկովկան կառավարութիւնն ինչ պատճառ կրնայ ունեցած ըլլալ որ այսպիսի անկարելի բանի մը ձեռնարկէ : Եթէ ստուգիւ կայ այս տեսակ իրողութիւն մը , շատ շատ աչ-խարհագրութեան անհմուտ երկրորդա-կան պաշտօնակալի մը սխալն ըլլալու է , և այս տեսակ պարագայի մէջ ազգն ի-րաւունք կրնայ ունենալ դիտարկութիւն ընելու : Յանձնախումբն ինչ տեղեկու-թիւն ունի այս մասին :

Արեւիկայ Դ. Զարէ
22 յունիս 1879

Բերա 12 յուլիս 1879

. . . Խմբագիր .

Ամայոյ 7ի շաբաթի աւուր Լրագիր թերթին մէջ « Եւստովաբանս Վարժա-րան և Կիլիկեան Ընկերութիւն » վերնա-գրով խմբագրական յօդուած մը կար-դացի , որուն ներկայիս կը պատասխա-նեմ :

Եւստովաբանս վարժարանի փակումը յայտնի է թէ մեծ ցաւ պատճառ էր ազգին և նա մանաւանդ Սմեռ. Ս. Պատ-րիարք հօր , որն որ յիշեալ վարժարանի բացման գործին մէջ մեծ ջանք ու աչ-խատութիւն ունենալէ ի դատ , անու-րանալի է թէ դորա իրականացման ինքն միայն եղած էր շարժառիթ , որով Ն. Ս. չէր կարող հանդիսար խոջով անտարբեր մնալ մի այնպիսի պարագայի մէջ :

Արդարեւ քանի՛ քանի՛ փորձեր չըրաւ Նորին Արագունութիւնը վարժարանը բա-նալու համար :

Այլ յիշեք անտարակոյս թէ նկատե-լով որ Օսմանեան արժէթը բերուն անկ-մանէն փնտռուելով Նուարա-Եւստովա-բան վարժարանը փակուելու դատարար-տուեցաւ , Միտհաթ փաշայի Մեծ-Ե-պարքութեան օրով , Ս. Պ. Հայրը դի-մեց Ն. Վսեմութեան և խնդրեց որ բա-րեհաճի չնորձ մ'ընել և յիշեալ վարժա-րանն այդ դատարարութեանէ ազատել : Վսեմ փաշան խոտապաւ , և նոյն իսկ անմիջական միջոցներ ձեռք առնուլ ըս-կրտաւ , սակայն քիչ օրէն Միտհաթ փա-շա պաշտօնակալ լինելով , Ս. Պ. Հօր յոյ-սերն ի դերն եկան :

Սակայն Ս. Պ. Հայրը չվստեցաւ , կըր-կին փորձ մ'ալ փորձեց , և ունենալով բա-նաւոր պատճառներ , պատշաճ դատեց դիմել Ազգային ընդհ. Ժողովոյ , և 1878 յունիս 2ի ընդհ. Ժողովոյ յիստին մէջ՝ Եւստովաբանս վարժարանը վերստին բանալու համար ընկերութիւն մը կազ-մել յանձնարարեց , սակայն Ազգային Ժողովոյ կողմանէ ևս քաջաբերութիւն և վստահութիւն չկրցաւ գտնել , քանի որ ո'չ առաջարկուած ընկերութիւնը կազմուե-ցաւ , և ո'չ իսկ Ս. Պ. Հօր յիշեալ առա-ջարկը յուսացուածին չափ կարեւորու-թիւն գտնելով արդեւ մ'ունեցաւ , ո-րուն պատճառը չեմք գիտեր :

Ս. Պ. Հայրը՝ անխախտ և հաստատ իւր սկզբանց մէջ , տեսնելով իւր երկու փորձերուն ապարդիւն ելնելն , և համոզ-ւած լինելով որ Եւստովաբանս վարժա-րանի վերականգնումը իւրեք կարելի է՝ եթէ իւր առաջարկին համեմատ մի ընկերու-թիւն կազմուի , և քանի որ Նուարա-Եւս-տովաբան Սմեռեք , որ դեռ ուսանողը յիշեալ վարժարանի մէջ , կազմած էին Վարդանեան ընկերութիւնը միմիայն Կի-լիկիոյ Հաճնէ քաղաքին մէջ վարժարան-ներ բանալու նպատակաւ , ինչպէս որ իրենց այդ նպատակին գործադրութիւնն ալ իրաւորած էին այն օրէն յաւելաւ կամ նուազ յաջողութեամբ , որքան որ ներե-ցին ժամանակն ու պարագաներն , Ս. Պ. Հայրն մերձ իմաստուն խորհուրդն ծնաւ այս գործն Եւստովաբաններէ կազ-մուած ընկերութեան մը յանձնել , ինչ-

կատելով որ յիշեալ Սմեռեք , Նորին Արագունութեան Եւստովաբանս վարժա-րանի նկատմամբ ունեցած դիտարկու-թիւնն իրացած օրէն , արդէն բանիցս գիտած էին և խնդրած , և թէ ինքն այլ և այլ նկատմանով իւր առաջարկը նախ ընդհանուր Ժողովոյ ներկայացնելն բանաւոր դատած լինելուն համար որո-շում չէր տուած , սակայն յիշեալ Ժողովոյ կողմանէ , որ բնի է պաշտօնապէս ազ-գին կողմանէ , արդիւնք մը չտեսնելով՝ Եւստովաբանս վարժարանը որիչ մարմնոյ մը միջոցաւ զլուս ածել այն երկն , թէ պէտ- և իրաւասութիւն իսկ ունէր առանց վա-րանելու որոշում մը տալ , նկատելով որ միանգամայն Եւստովաբանները ամէն կեր-պով իրաւունք ստանձնած էին ամենէն աւելի Եւստովաբան կառույց գործադրել և սկսուած երկն շարունակել , նկատե-լով նաեւ որ իրենց բարերար Եւստովաբ-նարգաւետի փառքն ու խոյճերն , նորա տղաքներական զգացմանցն ողայն և զխաւարութեանց համեմատ , իւր սա-ներն օտարներէն շատ աւելի ախտա- և խոջի մտքը կը կատարեն , հրաւիրեց Վարդանեան ընկերութեան մի քանի անդամներն և իւր օրոշումն յայտնեց նոցա . Վարդանեան ընկերութիւնը նոյն օրէն վերականգնուեցաւ Եւստովաբանս անունը միւր թեման « Կիլիկեան ընկերու-թիւն » անուամբ , նպատակ ունենալով այս անգամ փոխանակ միմիայն Հաճնէ քաղաքին մէջ գործելու , ամբողջ Կիլի-կիոյ մէջ ազգային դատարարութեան ընդհանրացնել , քանի որ այս էր Եւս-տովաբան նպատակն ալ , զոր բողոք չու-նեցաւ նա ինքն կենդանի առջը տեսնել :

Այս առթիւ էր որ Ս. Պ. Հայրն ալ իր մասնաւոր պաշտօնակալութիւնն և հո-վանաւորութիւնն նուիրեց Կիլիկեան ըն-կերութեան՝ մեծամեծ յուսադրութեան ներքի և 1879 փետրվար 18 թուով Եւս-տովաբան Սմեռն յանգամանակութիւն հրաւիրուելով , զանոնք երջանկալիաւ տակ Եւստովաբանի օրէնքալ նպատա-կին ու կառկին արդեամբ և իրքե ժա-ւանգորդք և շարունակողք հոգակեց , և զոր Լրագիր խմբագիր էֆ. ին իւր ապ-րիլ 15 թիւ թերթին ինքն ալ հաստա-տած է գովեստներով , սա եւս յառաջ բերելով թէ « Կիլիկիոյ դատարանի շըր-ջանին Արարատեան ընկերութեանէն ա-ւելի Կիլիկեան ընկերութեան բաժինն համարել կարժէ եւ » և այսօր այսքան մեծ զարմանք ցոյց կուտայ այս մասին :

Կիլիկեան ընկերութիւնը , իւր աշխա-տութեանց յառաջադիւծ ունենալով եր-ջանկալիաւ Եւստովաբանի կողմին ու նպատակը , կազմուած օրէն Եւստա-վաբան վարժարանի խնդրով զարդիւ սկսաւ , որն որ այլ ևս իր կողմն ու պաշտօնն եղած էր , և այս իսկ դիւրին է հաստատել ընկերութեան ընդհանուր Ժողովոյ առնագործութիւններէն : Կիլի-կեան ընկերութիւնը պաշտօն և իրաւունք ստանձնեց միանգամայն նախ իւր ազգ , և երկրորդ՝ իւր Սմեռեք Եւստովաբան , դատարար լինել և պաշտօն իրենց իս-րերարին կողմին և մասնաւորաբար Կի-լիկիոյ Հայոց արդար իրաւանց , որը միւս խաղալի եղած են շահախնդրն անձանց ձեռք , և Կիլիկիոյ երբեք չէ օգտած . և այս տեսակետով էր որ ընկերութիւնը Կիլիկեան նուիրատուութեանց խնդրը նկատուելու անու և իր օրակարգե-րուն մէջ խնդրեց կարգն անցուց : Կիլի-կեան ընկերութիւնն իւր այս ընթացքով ոչ Եւստովաբան վարժարանը իրեն սեպ-հականելու և կամ սեպհականելու կարեւ-րութեանց վրայ կը խորհէր և ոչ ալ յա-նուն Կիլիկիոյ՝ այլ և այլ ժամանակ՝ զանազան անձինքներու միջոցաւ հաս-նուած և նպատակին չգործածուած նը-ւիրատուութիւններն կողքի կու տու-այլ զանոնք օրապայանելով և իրագործե-լով Ազգին և Կիլիկիոյ Հայ Ժողովոյն իրաւունքներն իրենց վերագործնել ջա-նալով , պարզ ծառայութիւն մը մատու-ցանել , որով Եւստովաբան օրհնութեանց պիտի արժանանար :

Եւ ո՞վ կրնար այլ իրաւունքն ամուր Կիլիկեանի ձեռքն , քանի որ յիշեալ վարժարանը և նուիրատուութիւններն ա՛յն երկրին համար են , որ Կիլիկեան ընկերութիւնը պաշտօն ստանձնած է մը-

տաւորական զարգացման նպատակը և դատարարութիւնն ընդհանրացնել , և չէ՞ մի որ վարժարան և նուիրատու-թիւնը ամենամեծ միջոցներ են այն քանի ի գլուխ հանելու . Կիլիկիոյն քանի որ ունի իր սէպքը հայկալիկ երեւ միջոցնե-րուն մեծ մասը , է՞ր ապա չէ իրեն սեպհականութիւններն :

Ահա այս նպատակաւ էր որ Կիլի-կեան ընկերութիւնը յատուկ յանձնա-խումբ կազմած էր և որ այս գ-ր-թ-թ կարգադրութեամբ կզգաղէր և քանի՞ քանի անգամներ յիշեալ յանձնախումբը Ս. Պ. Հօր դիմեց խորհրդակցութեան համար :

Խմբագիր Էֆէնտի , խաղաղի թաղ-խորհրդոյ ընթացքը չէր որ Կիլիկիոյ Եւս-տովաբան վարժարանի . բառերը Կիլի-կեանի օրակարգերուն մէջ կարդացուե-ցան , ընդհակառակն Խաղաղի թաղ-խորհրդոյ անդամներէն ոմանք՝ անդամա-կից լինելով միանգամայն Կիլիկեան ըն-կերութեան , որով տեղեկ ևս ընկերու-թեան գործոց ու նպատակին , ուղիւր են ընկերութեան այս ընկիւղ մեծ գործին արժէքը կտարել և իւր նոր թաղ-խոր-հուրը , նոր գործ մը ըրած լինի :

Այս ըստծիս հաստատութեան համար կը խնդրուի յիշեալ թաղ-խորհրդէն , որ բարեհաճի Եւստովաբան վարժարանի բանալու համար ստացած « զրամանագի-րը » ցոյց տալ , և չէ՞ մի որ յիշեալ թաղ-խորհրդը գաղափար լացաւ զվարժա-րանը մէկ զիւրեւրտն մէջ օրուով տալով և զիւրեւրաց , ինչպէս ըրած եմք . . . :

Միտհաթ փաշայի խոսքով

Ի Լ Ա Ն

Նիդամիյէ սէպղէ քօմիտիներ ի-չուն ասքսան պէշ սէնէսի աղոթմոս խղթխտաւորման ասքսան ալթը սէ-նէսի մարթ նիհայէթինէ քատար պէ-հէր հաֆիմ իկիմի պէշէր պին քը-յէսի թէսիմ՝ օլուհմաք վէ նըսիւր նա-րօլի վէ նըսիւր տիկէրի Մարտիկանըն օլարաք շուրուլթը մուգարբէրի ի-լէ միւսպիւս օլուհմաք սէքիդ երիզ պին դըյէ Բաթմաթէլին պէհէր դը-յէսի գըրդ վարայաթալիլի էօհսէ-սինտէ օլուհմաք քօմիտի իկիմի իկիմի մի տէօրտիւնի սալը կիւնի միւնա-քատար ինքա օլուհմաքլընտան ի-թապընա թալիս օլուհմաքն եէվի մէքըրուտէ Տարը Շուրայի ասքէրի-յէ կէլմէլէրի :

19 թէմուշ 1879
Պապը Սէրասքէրի

Նիդամիյէ նանը ազիլ խաղաքի տէ իրմէնէրի հարաւորման ֆի-րուլթ օլուհմաք պէշ երիզ պին դըյէ քէվէլին էսմանը սիմմէլիսի-յէ իկիմի դըշ հիւսալը իլէ նագաէն վէ փէշինէն վէրիւու պատհաւ քա-տըրլմաք շարթը վէ շէրայիլթը սա-յիւրէսի իլէ պէհէր դըյէսի սէքիդ վարայա թալիլի էօհսէսինտէ օլուս թէմուշ քօմիտի իկիմի տէօրտիւն-ճի սալը կիւնի գարարը գաթիսի վէրիլէճէլինտէն , իլթիւրայէ թալիս օլուհմաքն եէվի մէքըրուտէ Տարը Շուրայի ասքէրիլէ կէլմէլէրի :

19 թէմուշ 1879
Պապը Սէրասքէրի

Նիդամիյէ երգաք անպարը իչուն մէմուր նուսուհէլինէ թէվիլիլէն միւսպիւս օլուհմաք օն պէշ պին դըյէ Բէթիմ սապուհընըն շէրայիլթը Ժուգարբէրէսի իլէ պէհէր դըյէսի տէօրթ դըշ օն վարայա թալիլի էօհ-տէսինտէ օլուս թէմուշ քօմիտի ի-կիմի պիլինճի ճուս իրթիսի կիւ-նի միւնագապար ինքա օլուհմա-ճաղընտան , թալիս օլուհմաքն եէվ-մի մէքըրուտէ տարը Շուրայի աս-քէրիլէ կէլմէլէրի :

19 թէմուշ 1879
Պապը Սէրասքէրի

d, m, f	d, m, f	d, m, f	d, m, f
11 30	5 25	11 30	5 25 $q_{2, f} f^2$
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40 $q_{1, 2} / p^2 m_2$	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5